



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



Ծաղկազարդ

05 ԱՊՐԻԼ 2009

| | |
|----------------------------|------|
| Կիրակնօրեայ ընթերցումներ | էջ 1 |
| Յարութեան Պատգամ | էջ 2 |
| Յորելեմական Հոգեւոր Համերգ | էջ 5 |
| Ծանուցում | էջ 8 |

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ

(9.9-17)

Մեծապէս ուրախացի՛ր, Սիրոնի՛ր բնակիչ, ցնծութեամբ աղաղակէ՛, բնակի՛չ Երուսաղէմի. ահա թագաւորդ քեզի կու գայ արդարութիւն եւ փրկութիւն բերելու. որպէս հեզութեան նշան՝ նստած իշու վրայ, դեռ մատղաշ աւանակի վրայ: Անիկա Եփրեմի երկրէն պիտի անհետացնէ պատերազմի կռքերը, Երուսաղէմէն պիտի վերացնէ պատերազմի ձիերը. պատերազմի աղեղը պիտի խորտակէ եւ խաղաղութիւն պիտի յայտարարէ ժողովուրդներուն: Անիկա իր իշխանութիւնը պիտի տարածէ ծովէ ծով, Եփրատ գետէն սկսեալ մինչեւ ծայրերն աշխարհի: Գալով քեզի, Տէրը այսպէս կ'ըսէ. «Քանի արիւնով ուխտ կնքեցի հետդ, գերեվարուած քու եղբայրներդ պիտի ազատեմ անջրդի անապատին խորերէն: Երուսաղէմ վերադարձէք, ո՛վ գերիներ, որ յոյսով կը սպասէք. ահա կը յայտարարեմ, թէ ձեր աքսորի ժամանակաւոր զրկանքներուն

ձեռքիս մէջ պիտի բռնեմ պատերազմիկ զինուորի պողպատեայ սուրին նման»: Այո՛, Տէրը ինք վերակացու պիտի ըլլայ անոնց վրայ. անոր նետը փայլակի պէս պիտի հարուածէ: Տէրը, Ամենակալ Աստուածը փող պիտի հնչեցնէ եւ թշնամիներուն դէմ պիտի քալէ՝ մրրիկի պէս սպառնալից: Ամենակալ Տէրը ինք պիտի պաշտպանէ իր ժողովուրդը եւ անոնք պիտի բնաջնջեն թշնամիները զանոնք պարսատիկներու քարերուն տակ թաղելով. անոնց արիւնը պիտի խմեն որպէս գինի եւ անոնց արիւնով տաշտեր պիտի լեցնեն, այնպէս՝ ինչպէս կ'ընեն զոհասեղանին վրայ: Այն օրը Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը այնպէս՝ ինչպէս հովիւ մը կը փրկէ իր սեփական հօտը. եւ անոնք թանկագին քարերու պայծառութեամբ պիտի փայլին Աստուծոյ երկրին մէջ. երկիր մը՝ ամէն բարիքներով ու գեղեցկութեամբ լեցուն, ուր երիտասարդները ցորենով պիտի աճին եւ կոյսերը՝ անուշարար գինիով:

Այն օրը
Տէրը պիտի
փրկէ իր
ժողովուրդը
այնպէս՝
ինչպէս հովիւ
մը կը փրկէ
իր սեփական
հօտը...:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

ՆԱՄԱԿԷՆ

(4.4-7)

Միշտ ուրախ եղէք Աստուծոյով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Որեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ

Այո՛,
Տէրը ինք
վերակացու
պիտի ըլլայ
անոնց վրայ.
անոր նետը
փայլակի
պէս պիտի
հարուածէ:

փոխարէն՝ կրկնապատիկ բարիքներով պիտի հատուցանեմ ձեզի: Ինծի համար Յուդան պիտի լարեմ աղեղի պէս, իսկ Եփրեմը՝ նետի պէս. զաւակներդ հեթանոսներուն դէմ պիտի հանեմ, ո՛վ Սիրոն, եւ քեզ

Որեւէ
բան թող
չմտահոգէ
ձեզ.

աղաչանքներուն մէջ գոհունակ սրտով Աստուծոյ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ մտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սրտերն ու մտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՆՍԻ
(20.29-21.17)

«Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»:

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: Ծամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի,

սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գլխաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ, Զիթենեաց լերան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը ղրկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէք սա զիմացի գիւղը եւ հագիւ այնտեղ մտած կապուած էշ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէք եւ ինծի բերէք: Եթէ մէկը առարկէ, ըսէք. “Տէ՛րը անոնց պէտք ունի”, եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը.

“Երուսաղէմի ըսէք. Ահա քու թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ”:

... օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էշն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր.

“Օրհնութի՛ն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով:

Օրհնութի՛ն Բարձրեալին”:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբոխը կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վռնտեց բոլոր անոնք որոնք տաճարին մէջ առուծախ կ'ընէին.

լուծալափոխներուն սեղանները եւ աղաւնեվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. “Իմ տունս աղօթի տուն պիտի կոչուի”, մինչ դուք զայն աւազակներու որջի վերածած էք»:

“Իմ տունս աղօթի տուն պիտի կոչուի”

Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. “Օրհնութի՛ն Դաւիթի որդիին”, բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ատոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած սուրբ գիրքին սա խօսքը, թէ “Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր”:

Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ քաղաքէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄ

«Խաղաղութիւն ընդ ձեզ, ես եմ, մի երկնչիւք :
Ձեզի Խաղաղութիւն, ես եմ, վախ մի ունենալ»,
ՅԻՍՈՒՍ :

Քսանմէկ դարեր առաջ, այս օրերուն երուսաղէմը կ'եռար, ամբողջ քաղաքն ու բնակչութիւնը խռովքի մէջ էին. ոմանք յաղթանակի լայն ժպիտով կը պատմէին չարչարանքներն ու անարգ խաչելութիւնը անբացատրելի կարողութիւններով օժտուած ու ըմբոստ Յիսուս կոչուած այն քարոզիչին, որ համարձակած էր ընդունուած սովորութիւնները խախտել, ընկերային հեղինակութիւնները քննադատել, հաստատուած օրէնքները յեղափոխել, «աչքի դէմ աչք»ի փոխարէն «սիրէ քու նմանդ քու անձիդ պէս» պատգամել, աղքատին, անկարին, խեղանդամին, մեղաւորին կողքին կանգնիլ եւ սէր, մխիթարութիւն, բժշկութիւն եւ փրկութիւն քարոզել, ի վերջոյ կարողացած էին՝ իրենց թակարդներով եւ իրենց մատնութեամբ, իրենց ստրկամիտ դաւաճանութեամբ ձերբազատիլ՝ անոր անհանգստացնող, իրենց կեղծ ու ձեւապաշտ արարողութիւնները բացայայտող ներկայութենէն: Եւ ան դաժան կերպով չարչարուած ու խաչուած էր, եւ ժայռափոր գերեզմանի մը մէջ դրուած ու հսկայ վէմով մը ծածկուած էր:

Իսկ անոր հետեւորդներուն փոքրաթիւ մնացորդացը, այս բոլորին ի տես՝ սարսափահար եւ ջարդակոտոր երազներով յուսախաբ ցրուած էր ու վերադարձած իր գիւղերն ու ձկնորսի խեղճ նաւերը:

Մարկոս աւետարանիչ եւ յատկապէս Ղուկաս աւետարանիչ այդ ցնցիչ դէպքերու իրարանցումին մէջ հանդիպումի մը կ'ակնարկեն, եւ կ'ըսեն.

Յիսուսի հետեւորդներէն երկու հոգի եմմաուս անունով իրենց գիւղը կը վերա-դառնային, որ երուսաղէմէն շուրջ տասնմէկ քիլոմետր հեռու էր: Ծամբու ընթացքին անոնք կը խօսակցէին ու կը վիճէին անցնող քանի մը օրերու պատահարներուն մասին, երբ անծանօթ մը եկաւ, միացաւ ու սկսաւ քալել իրենց հետ:

Ան հարցուց. «Ինչո՞ւ այդպէս տրտում էք ու կը վիճաբանիք»: Անոնք պատասխանեցին. «Ձե՞ս լսած թէ ինչ պատահեցաւ Յիսուս Նազովրեցիին»: Եւ սկսան անոր պատմել վերջին օրերու պատահարները, եւ եզրակացուցին ըսելով.

«Մեր ղեկավարները գայն Հռոմէացիներուն մատնեցին եւ մահուան դատապարտելով խաչեցին: Մենք յոյս ունէինք, որ ան պիտի ըլլայ ազատարար մեր ժողովուրդին»:

Ապա Ղուկաս աւետարանիչ կը շարունակէ ըսելով, թէ հակառակ որ անոնք լսած էին Յիսուսի Յարութեան մասին, սակայն կը մնային թերահաւատ ու կասկածով լեցուն, եւ հալածանքէ վախնալով կը նախընտրէին վերադառնալ իրենց գիւղական սովորական կեանքին:

Այն ատեն, օտարականը, սկսաւ անոնց բացատրել փրկիչի մասին դարաւոր հաւատքին ծալքերը եւ մեկնաբանել զանոնք: Անդրադարձան որ արդէն իսկ հասած էին իրենց գիւղը, մինչ օտարականը կը պատրաստուէր շարունակել իր ճամբան: Երկու ուղեւորները խնդրեցին, որ ան իրենց մօտ մնար այդ գիշեր եւ շարունակէր իր բացատրութիւնները:

Տունին մէջ անոնք ընթրիք պատրաստեցին եւ երբ տեղաւորուեցան, օտարականը առաւ հացը, աղօթեց եւ կտրելով իր սեղանակիցներուն տուաւ:

Այդ ծանօթ շարժումին մէջ յանկարծ անոնք ճանչցան օտարականը, որ ուրիշ մէկը չէր եթէ ոչ իրենց սիրելի վարդապետը, բայց արդէն իսկ օտարականը անհետացած էր:

Անոնք անմիջապէս ոտքի ելան եւ նոյն գիշերն իսկ երուսաղէմ դարձան լեցուած նոր յոյսով եւ ուժականութեամբ, եկան վերնատուն ուր գտան Յիսուսի հետեւորդներէն շատերը եւ անոնց պատմեցին իրենց տեսիլքը:

Մինչ այսպէս կը խօսէին Յիսուս դարձեալ յայտնուեցաւ եւ ըսաւ. «Ձեզի խաղաղութիւն կը մտնի ձեզ, ես եմ. մի վախնաք»:

Յիսուսի Յարութիւնը աշխարհացունց դրուաւ մըն է, մարդկային պատմութեան մէջ Աստուածային յայտնութեան իւրայատուկ միջոց մը, որով Ան մեր՝ մարդոցս ուշադրութիւնը իր վրայ կը կեդրոնացնէ: Յարութիւնը միջոց մըն է, որով Աստուած մեզ գինքը լսելու կը հրաւիրէ եւ գինքը լսելով՝ նոր կեանք մը ապրելու:

Աստուած Յարութեան դէպքը չիրականացնէր մեղեդիական արեւածագի մը քնքշութեամբը, այլ աշխարհացունց երկրաշարժի մը ուժգնութեամբը, Մատթէոս աւետարանիչ կ'ըսէ. «Յանկարծ գորաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը եւ նստաւ անոր վրայ» (Մտ 28:1-3):

Աստուած կը ցնցէ մեզ, եւ նոր կեանքով ապրելու իր հրաւէրը մեզի կը հրամցնէ մեր աշխարհը իրարանցումի մատնող գործողութեամբ: Քրիստոնէական հաւատքը սկիզբ կ'առնէ պայթումով մը, որով Աստուած

մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնէր իր վրայ: Մարկոս աւետարանիչ կ'ըսէ երբ կիններ գերեզման կ'երթային՝ ունէին իրենց մտահոգութիւնները: Անոնք կ'ըսէին. «Ով պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը» (Մկ 16:3):

Մեզի պէս անոնք ալ ունէին իրենց յատուկ մտածումները, հաւանաբար մտահոգ էին երեկոյեան ընթրիքով, ունէին իրենց իւրաքանչիւր ծրագիրները, իրենց յատուկ յիշողութիւնները, երազները, իրենց վիշտն ու վախերը: Բայց Աստուած կու գար ընդհատելու այդ բոլորը՝ ցնցիչ պատահարով մը. կինները տեսան Աստուծոյ հրեշտակը, որ իր պայծառ ներկայութեամբը նստած էր գերեզմանի քարին վրայ, եւ իրենց կ'աւետէր. «Մի՛ վախնաք, խաչուած Յիսուսը կը փնտռէք: Հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս ըսած էր: ...Գացէք եւ ըսէք իր աշակերտներուն...: Ան ձեզմէ առաջ կ'երթայ...» (Մտ 28:5-7):

Մեր նոր կեանքը սկիզբ կ'առնէ, երբ մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնենք Աստուծոյ վրայ: Եւ մեզմէ շատերուն համար, երկրաշարժ մը պէտք է, որպէսզի կարենանք ցնցուիլ մեր առօրեայէն, դուրս գալ մեր քնաշըջիկի վիճակէն եւ մտիկ ընել թէ Աստուած ինչ կ'ըսէ եւ թէ մենք ինչպէս պէտք է ապրինք:

Եմմաուսի ուղեւորներուն նման մենք ալ յաճախ կեանքին մէջէն կ'անցնինք, անտարբեր մեր շրջապատին կը նայինք ու չենք տեսներ մեզի հետ քալողները՝ մեր նմանները, մեր ընտանիքը, մեր զաւակները, յաճախ կը քալենք կլանուած մենք մեզմով, մեր ջարդուած երազներով, մեր յուսախաբուութիւններով, մեր վիշտերով ու չենք անդրադառնար մեր կեանքին ընկերացող ամենօրեայ հրաշքներուն եւ յաճախ Աստուծոյ միջամտութիւնը պէտք է, որ կայծակ մը պայթի մեր կեանքին մէջ եւ մեր միտքը լուսաւորուի յանկարծ ու մենք ըսենք. «Հիմա կը հասկնամ այս բոլորին նշանակութիւնը», ինչպէս որ Յիսուսի աշակերտներուն աչքերը յանկարծ բացուեցան եւ տեսան իրենց առաջնորդը:

Նոր կեանքը կը սկսի, երբ մենք կը լսենք Աստուծոյ պատգամը եւ կը գործենք այդ պատգամին համաձայն, ինչպէս ըրին Յարութեան առաւօտուն գերեզման այցելող կինները, որոնք թէեւ զարմացած, եւ տարօրինակ դէպքերուն իմաստը թէեւ ամբողջապէս չիւրացուցած, բայց Աստուծոյ պատգամին համաձայն՝ գացին տանելու համար Յարութեան աւետիսը, այսինքն ապրեցան եւ գործեցին իրենց տրուած պատեհութեան համաձայն: Մեր նոր կեանքն ալ կը սկսի, երբ կը գիտակցիք, որ կեանքը մեզի տրուած պատեհութիւն մըն է եւ զայն պէտք է

գործածենք տիրանալու համար այն գանձին, որ գողերը չեն կրնար յափշտակել ու ցեցերը չեն կրնար փճացնել, այսինքն՝ կեանքը ապրիլ արժեւորելով անոր իմաստն ու իւրաքանչիւր վայրկեանը:

Եմմաուսի ուղեւորութեան այս դրուագը մեր ալ ուղեւորութեան դրուագն է: Երբ կեանքին մէջ կը քալենք կեդրոնացած մեր ետին վրայ, կը զգեանուինք եւ կը դառնանք ժամանակաւոր ու մահկանացու հակներ: Սակայն երբ մեզի հետ կը քալէ Քրիստոսի հաւատքը եւ մեր քայլերը կ'առաջնորդուին Աստուծային ճշմարտութիւններու պատգամով, մեր կեանքը նոր պարունակ կը ստանայ, յարութիւն կ'առնէ առօրեայի մոխիրներէն եւ կը դառնայ յաւիտենականութեան ուղեւորը:

«Մի վախնաք, ես ձեզի հետ եմ»:
Հոս կը մէջբերեմ Եղիշէ արք. Դուրեանի «Եմմաուսի ճամբորդները» գեղեցիկ ու աւետարանական խոր ապրումներով գրուած բանաստեղծութենէն քանի մը յատկանշական հատուածներ.

«Խոնջ ու տրտում կ'երթան երկուքն Եմմաուս Անդիմադիր վիշտ մը գիրեմի կը տանի:
Որքան յոյսեր իր հետ թաղած էր Յիսուս
Ու աչք մը դեռ չէր տեսած զինք կենդանի:

Ինչո՞ւ անհուն խոռովն է պատեր ձեր հոգին,
Թախծութեան մէջ կ'ալեկոծիք աչ ու ձախ.
Անյոյս հոգին մերժումն է լոյս հաւատքին,
Աչք մըն է որ հրաշքի լոյսին է օտար:

Մեղք այն աչքին՝ որ վայելեց լոյսն Անոր՝
Ու կը հաւատայ անէութեան գիշերին.
Մեղք այն խիղճին, որ լսեց ձայնն երկնաւոր՝
Ու կը պաշտէ ամայութիւնը լոյսին:

Քանիներու դեռ անծանօթ մ'ես Յիսուս,
Որք սրբտամաշ լինումներով կասկածի՝
Ուրացումի ընդվզումի մ'ալ անյոյս՝
Կ'ընդգրկեն մութն՝ որ թեւաբախ կը յածի:

Ուշ կամ կանուխ պիտի հասնի արդարեւ
Տարածամած օրն անցաւոր մեր կեանքին,
Բայց թող հոգին չըհետեւի անարեւ
Տարակոյսի մըռայլ ցամբու երկայնքին:

Խոնջ ու տրտում թէ Եմմաուս երթանք մեմի՝
Մեզ երեցիք, մեզ հետ խօսէ իբր ընկեր,
Հնչէ՛, ցոյա՛, մեր էութեան խորն աննեմի՝
Ով անծանօթ Աստուծոյն Չայն ու Պատկեր»:

Շնորհաւոր Սուրբ Զատիկ:
Քրիստոս Յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի



**ՅՈՒՆԵՆԱԿԱՆ
ՀՈԳԵԻՈՐ ՀԱՄԵՐԳ**

Կիրակի, 29 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին, շուրջ 900 հոգի լեցուցած էր Մոնթրէալի Ռուս Կաթոլիկ-Մելքիթ նորակերտ տանար՝ Cathédral St-Sauveur-ը: Ամէնքը եկած էին Ս. Յակոբ Առաջնորդա-նիստ Մայր Եկեղեցւոյ 50-ամեակին նուիրուած համերգը վայելելու:

Առիթին իր Բարձր Հովանաւորութիւնը շնորհած էր Գանատայի Հայոց Թեմին Առաջնորդ՝ Գերշ. տ. Խաժակ արք. Յակոբեան: Իսկ նախագահութիւնը յանձն առած էին տ. եւ տիկ. Գէորգ եւ Արաֆսի Օհանեան:

Առաջնորդ սրբազանը իր կողմին ունեցաւ ներկայութիւնը Գանատայի Մելքիթ գաղութին Առաջնորդ՝ տ. Իպրահիմ Իպրահիմ Եպիսկոպոսը եւ Գանատայի



Ասորի Ուղղափառ գաղութին Պատրիարքական Փոխ-նորդ՝ տ. Աթանասիոս Էլիա Պափարքեան արքեպիսկոպոսը: Հոն էին նաեւ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Հայ Կաթոլիկե գաղութին Առաջնորդական Փոխնորդ՝ Գերշ. տ. Գէորգ ծ. վրդ. Զապարեան, եւ հոգեշնորհ, արժանաշնորհ ու վերապատուելի հովիւներ, եւ ազգային ու եկեղեցական կառոյցներու ներկայացուցիչներ:

Յայտագրին բացման խօսքը կատարեց օրուան հանդիսավարը՝ Տիկ. Անի Պապիկեան: Ան հայերէնով եւ ֆրանսերէնով արտայայտուեցաւ: Տիկ. Պապիկեան յատուկ շնորհա-կալութիւն յայտնեց Մելքիթ Առաջնորդին, որ արտօնած էր տանարին գործածութիւնը: Նաեւ՝ եկեղեցւոյ հովիւներուն ու վարչութեան, որոնք սիրալոյսով ընդառաջած էին իրենց սրբավայրին մէջ՝ համերգին կատարման դիմումին:

Ս. Յակոբ Եկեղեցւոյ Գործադիր Մարմինն էր համերգը կազմակերպողը: Համերգը խմբերգային եւ մեներգային բաժիններ ունէր:



բոլոր ներկաներուն:

Ստեղծագործ 50-ամեակը՝ պէտք է որ իր համերգին մէջ եւս յայտնուէր իբր ստեղծագործ: Ուստի, հովիւին՝ տ. Գառնիկ ֆհնյ. Գոյունեանի պատուէրով երիտասարդ երաժիշտ պրն. Սարգիս-Վաչէ Պոյանեան ֆառաձայն երգչախումբի համար արդի շունչով մշակած էր «Անկանիմֆ առաջի ֆո Աստուածածին» շարականը, որ մեկնաբանուեցաւ անոր յատուկ երգչախումբին կողմէ: Խմբավարն էր խոստմնալից տաղանդ՝ օրդ. Լորի Անտոնեանը: Շարականի կատարման ընթացքին դաշնակով ընկերացաւ տիկ. Անի Պապիկեան:

Յետ Միացեալ երգչախումբի առաջին երեք երգերուն, բեմ կը բարձրանար սոփրանօ տիկ. Յասմիկ Գասպարեան,

Խմբերգներ կատարուեցան Ս. Յակոբ եւ Ս. Գէորգ Եկեղեցիներու Միացեալ երգչախումբին կողմէ,



ղեկավարութեամբ՝ տ. Հրայր ա. ֆհնյ. Նիկոլեանի եւ տիկ. Յասմիկ Իննէնիկեանի: Այս երգչախումբը ունէր դաշնակահար տիկ. Գալար Գալլօղլեանի նուագակցութիւնը:

Միացեալ երգչախումբը երկու անգամ բեմբարձրացաւ. նախ՝ սկիզբը եւ ղեկավարուն-

բեամբ տ. Հրայրի երգեց «Օրհներգ Հայրապետական»ը, «Էջմիածին»ը եւ «Կիլիկիա»ն: Ապա՝ ղեկավարութեամբ տիկ. Յասմիկի «Ave Verum corpus», «Rejoice», «Գովեա Երուսաղէն գՏէր», «Որք Զարդարեցին» երգերը: Ետքը տ. Հրայր խումբը ստանձնելով մեկնաբանեց «Եթէ Զիս Տանիս»ը եւ «Պահապան Ամենայնի»ն:

Մեծ աշխատանք տարւած էր: Եւ Միացեալ երգչախումբը յաջողեցաւ գեղեցիկ ապրումներ եւ խոր ներշնչում պարգեւել

բարձրանար սոփրանօ տիկ. Յասմիկ Գասպարեան, որ իր ֆաղցրաձայն ու նրբագեղ ոճով կը մեկնաբանէր հինգ շարականներ. «Աստուածածին Երկնային», «Աստուածածին Ամպ Լուսաւոր», «Լոյս Լուսոյ Մայր», «Լոյս Ի Լուսոյ» եւ «Լոյս Զուարթ»:

50-ամեակին ստեղծագործականութեան յայտնարար երկրորդ տարրը համերգին մէջ, Ս. Յակոբի շարականին եռեակ ջութակներու եւ պարիթոն ձայնի համար մշակումն էր:



Ասիկա եւս գրուած էր հովիւին պատուէրով, տաղանդաւոր եւ վաստակաւոր երաժիշտ պրն. Պետրոս Շուժունեանի կողմէ: Շարականին մշակման մեկեանսն էր պրն. Յովսէփ Եմէնիկեան: Ազնիւ նուիրատուն յանձն առած էր մեկեանսութիւնը ի յիշատակ իր երանեալ տիկնոջ եւ



Ս. Յակոբի համայնքին նուիրեալ անդամներէն՝ Ռիցա Եմէնիքեանի։ Պրն. Շուժունեան խմբավարեց շարականին կատարումը։ Իսկ երգեցողութիւնը հայ երաժշտական արւեստին իր խորունկ զգացողութեամբ

մատուցեցարն. Վարուժան Մարգարեան։ Ամբողջ

վարձին։

Հուսկ բեմբարձրացաւ Առաջնորդ սրբազանը։ Ան Գնահատանքի Յուշանուէրներ յանձնեց Միացեալ Երգչախումբի խմբավարներուն՝ տ. Հրայրի եւ տիկ. Յամիկի։ Որմէ ետք, նա խանգլերէնով արտայայտուեցաւ եւ



շնորհակալութիւն յայտնեց տ. Իպրահիմ Իպրահիմեայիսկոպոսին եւ տ. Աթանասիոս Էլիա Պահի արքեպիսկոպոսին՝ իրենց եղբայրական սիրոյն եւ ներկայութեան համար։ Ապա իր գնահատանքի խօսքը ուղղեց օրուան նախագահ զոյգին՝ տ. եւ տիկ. Գէորգ եւ Արաքսի Օհանեանին, մասնակցող արուեստագէտներուն եւ համերգին գաղափարը յղացող ու զայն կազմակերպող Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ ներկայ հովիւին՝ Տէր Գառնիկ Քենյ. Գոյունեանին, որ յոտնկայս ծափահարուեցաւ, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ Գործադիր Մարմինին։ Ու մաղթեց իրագործումներով լեցուն նոր յիսունամեակ մը։



ժողովուրդին հիացական փորձառութիւնը այսպէս պսակուեցաւ։

Յայտագրի աւարտին, Ս. Յակոբ Եկեղեցւոյ նախկին հովիւը, իսկ այժմու պատուակալ հովիւը՝ Արժ. տ. Արմէն ա. քհնյ. Իշխանեան Գնահատանքի Տախտակներ յանձնեց արուեստագէտ մասնակիցներէն՝ տիկնիկներ՝ Դալար Գալլօղլեանին, Յասմիկ Գասպարեանին, Անի Պապիկեանին, օրդ. Լորի Անտոնեանին, պարոններ՝ Պետրոս Շուժունեանին, Վարուժան Մարգարեանին եւ Սարգիս-Վաչէ Պօյանեանին։

Մինչ բեմ կը հրաւիրուէր վաստակեալ հովիւր՝ տ. Արմէնը, հանդիսավարը կը յայտարարէր անոր 35-ամեայ ծառայութիւնը։ Եւ ի՞նչ յուզիչ էր տեսնել ժողովուրդին յոտնկայս երկարատեւ ծափահարութիւնը։ Մշակը արժանի է իր



Հոգեւոր համերգը կնքուեցաւ խոլունբամ ժողովուրդին «Հայր մեր»ի երգեցողութեամբ։

ՄԱՍՆԱԿԻ8

ԵՐԵՍՆՈՐԵԱԿ

Առաջ Երեքշաբթի, 07 Ապրիլ 2009

19.00 Երեկոյան ժամերգութիւն

Առաջ Հրագրեր, 09 Ապրիլ 2009

10.30 Ս. Պատարագ

18.00 Կարգ ոտնլուայի

21.00 Կարգ խաւարման

Առաջ Ուրբաթ, 10 Ապրիլ 2009

19.00 Կարգ խաչելութեան եւ թաղման

Առաջ Հարաւ եւ Ընթացող, 11 Ապրիլ 2009

17.30 Ս. Գրային ընթերցումներ

18.30 Ս. Պատարագ

Կրթար, 12 Ապրիլ 2009

Ս. Զատիկ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երկուշաբթի, 13 Ապրիլ 2009

Յիշատակ Մեռելոց

Երեքշաբթի, 14 Ապրիլ 2009

19.00 Երիտասարդական զրոյց՝
«Կենսոլորտի գիտութիւնն ու կրօնը»

Հրագրեր, 16 Ապրիլ 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրթար, 19 Ապրիլ 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրեր, 23 Ապրիլ 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրթար, 26 Ապրիլ 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 28 Ապրիլ 2009

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն՝
“The Chronicles of Narnia: Prince Caspian”

Հրագրեր, 30 Ապրիլ 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրթար, 03 Մայիս 2009

Կարգի Կրթար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՅ ԻՒՂԱԳԻՆ

Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ՏՕՒՐՆ ԱՌԹԻ,
ՎԱՏԱՀ ԵՆՔ,
ՈՐ ՃԵՐ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՈՒՊԻ
ՊԻՏԻ ԶՈՌՆԱՅ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՒՂԱԳԻՆԻ ԻՐ
ԱՐՏԱՐՈՒՄ ԱՌԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհներ փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
թիւին,
կամ՝ 514 909 5203 թիւին:

Հոգեւանգստեան ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՆՍՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՂ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

Սոյն թերթիւն ե-տպագրով ստանալու
չաւար ՁԵՐ ե-չաւաթէն ուղղարկե՛թէք
eglise58@sourphagop.com-ին

Նախորդ թիւերը կրնաք գտնել
www.sourphagop.org/lradou
ԿԱՂԵՉԻՆ ՎՐԱՅ

ՀԻՎԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.
514 331 5445 x203 կամ 514 909 5203